



Burbank Unified School District
Superintendent's Office
1900 W. Olive Avenue
Burbank, CA 91506
Ph: 818.729.4422 • Fax: 818.729.4550

Board of Education
Dr. Armond Aghakhanian, President
Steve Frintner, Vice President
Charlene Tabet, Clerk
Steve Ferguson
Dr. Roberta Reynolds

Superintendent
Matt Hill, Ed.D.

8-6-2020

Հարգելի ընտանիքներ, աշակերտներ և աշխատակիցներ.

Այսօր երեկոյան ժամը 7-ին տեղի կունենա կրթական գրասենյակի հերթական ժողովը, որի ընթացքում կքննարկենք աշնանային հեռակա ուսուցման [Փոխըմբռնման հուշագիրը \(MOU\)](#) Բրեքենքի ուսուցիչների ասոցիացիայի (BTA) հետ: Դուք կարող եք դիտել ժողովը սեղմելով [այստեղ](#):

Մենք շարունակում ենք աշխատել դպրոցի մյուս աշխատակիցների արհմության (CSEA) հետ՝ նրանց փոխըմբռնման հուշագիրն ամփոփելու համար:

Տեխնոլոգիական աջակցության համացանցային երեկո ընտանիքների համար. Երեքշաբթի, օգոստոսի 18-ին, երեկոյան ժամը 7-ին, տեղի կունենա աջակցության համացանցային երեկո ընտանիքների համար, ովքեր ցանկանում են տեղեկանալ, թե ինչպես տեխնոլոգիական օգնություն ցույց տալ երեխաներին տնային պայմաններում: Երեկոյին մասնակցելու և տեղեկություն ստանալու համար, խնդրում ենք սեղմել [այստեղ](#): Կտրամադրվեն թարգմանիչներ, ինչպես նաև կցուցադրվեն աջակցող տեսաժապավեններ, կծանոթացնենք ծնողներին աջակցող նյութերի հետ և ժամանակ կհատկացնենք պատասխանելու հարցերի: Այս նյութերը հասանելի կլինեն ծնողներին, երբ դրանք տեղադրենք [այստեղ](#):

Մենդի բաշխում և առավելությունները. Մենդի բաշխումը կսկսվի ուրբաթ, օգոստոսի 14-ին, առավոտյան ժամը 8:30-12:30: Ամեն ուրբաթ օր, յուրաքանչյուր դպրոց բաշխման կետ կունենա, որտեղից կկարողանաք վերցնել 5 օրվա սնունդ աշակերտի համար: Մնունդը պետք է վերցնել երեխայի հաճախած դպրոցից: Աշակերտներին պարտադիր չէ ներկա գտնվել սննդի բաշխման ժամանակ: Անվճար սնունդ ստացող աշակերտներին հարկավոր չէ վճարել այս սննդի համար: Ձեռչված գնով սնունդ գնող աշակերտները պետք է զեղչված գնով գնեն այս սնունդը: Յուրաքանչյուր դպրոց սև ու սպիտակ գույնի ցուցատախտակ կցուցադրի սննդի բաշխման կետի տեղը գտնելու համար:

Մենդի դիմումագիրը հասանելի է համացանցում: Շատ կարևոր է, որ բոլոր ընտանիքները, ովքեր կարծում են, որ կորակավորվեն, ամեն տարի լրացնեն այն երեխաների համար: Յուրաքանչյուր ընտանիքի հասնում է ընդամենը մեկ

դիմումնագիր: Սեղմել այս հղումը դիմումնագիրը լրացնելու համար
<https://www.busdfoodservices.com/index.php?sid=1101131625567654&page=lunchapps>

Ամենավերջին նորությունների հետ կարելի է ծանոթանալ այս կայքում.
<https://www.burbankusd.org/Reopening>. Հաճախակի տրվող հարցերի (FAQs) հետ
կարելի է ծանոթանալ այս կայքում. <https://www.burbankusd.org/reopeningfaqs>.

Ձեր առաջարկները կարող եք ուղարկել re-opening@burbankusd.org հասցեին:
Խնդրում ենք նշել, որ դպրոցները բացելու հետ կապված բոլոր նյութերը տեղադրված
են մեր կայքում անգլերեն, իսպաներեն և հայոց լեզուներով: Ահա մեր
կայքը. <https://www.burbankusd.org/Reopening>.

Կորոնավիրուսի հետ կապված, գերատեսչի նախորդ շաբաթների նորությունների
հետ կարելի է ծանոթանալ այս կայքում. <https://www.burbankusd.org/COVID-19>

Աշխատելով միասին, մենք ավելի կհզորացնենք ԲԴՄՇ-ն:

Հոգատարությամբ,



Դոկտոր Մաթ Շիլլ
Գերատեսուչ